ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ Լ. Ա. ԴՈՒՐՆՈՎՈՅԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հայկական միջնադարյան կերպարվեստի հուշարձանների գիտական ուսումնասիրության և պահպանման գործում խոշոր ավանդ ունի Լիդիա Ալեքսանդրովնա Դուրնովոն, որի մահվան տասնամյակին էր նվիրված ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի և Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական նստաշրջանը, որ կայացավ 1973 թ. հունիսի 5-ից 6-ը Մատենադարանի նիստերի դահլիճում։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Լ. Խաչիկյանը իր ներածական խոսքում Լ. Ա. Դուրնովոյին բնութագրեց որպես միջնադարյան հայկական արվեստին նվիրված, մեծ էրուդիցիայի տեր անխոնջ գիտնականի։ Նա Հայաստան եկավ, երբ Սովետական Միության գիտական կենտրոններում արդեն ճանաչված հեղինակություն էր, միջնադարյան որմնանկարչության և պատկերագրության հմուտ մասնագետ։ Հայաստանում Լ. Ա. Դուրնովոն սկսեց ամենաարժեքավոր մանրանկարների և որմնանկարների պատճենահանման աշխատանքներից. Հայաստանի պետական պատկերասրահում ստեղծեց հայկական հին արվեստի բաժին, ուր մշտական ցուցադրման մեջ դրվեցին այդ բարձրարվեստ ու ճշգրիտ պատճենները։ Փաստորեն Դուրնովոյի գլխավորությամբ Հաղբատ, Արուճ, Լմբատ, Տաթև մեկնած գիտական արշավախմբերի աշխատանքի շնորհիվ էր, որ դրանց որմնանկարների մի մասը գիտական լայն շրջանառության մեջ մտավ։ Շատ բան արեց Դուրնովոն նաև հայ միջնադարյան արվեստի մարզում որակյալ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ։

Ականավոր արվեստագիտի կյանքին ու գործունեությանը նվիրված զեկուցումով հանդես եկավ արվեստի վաստակավոր գործիչ Ռ. Դրամփյանը։ Այժմ արդեն միանգամայն պարզ է, ասում է նա, որ եթե միջնադարյան Հայաստանի մեր արվեստագիտությունը հայտնի նվաճումների է հասել, ապա այդ բանում, ի թիվս այնպիսի գիտնականների, ինչպիսիք են Ն. Մառը, Հ. Օրբելին, Գ. Հովսեփյանը, Թ. Թորամանյանը, Ս. Տեր-Ներսեսյանը, իր որոշակի ավանդն ունի նաև Լ. Ա. Դուրնովոն։ Նրա աշխատությունները մի նոր աստիճանի բարձրացրին մեր արվեստագիտությունը։

Պետերբուրգյան ուսումնառության և սկզբնական աշխատանքային տարիներից հետո 1936 թ. Լ. Ա. Դուրնովոն տեղափոխվում է Հայաստան և իր բովանդակալից կյանքի վերջին 30 տարին նվիրում հայ արվեստին։ Դրա արդյունքը հանդիսացան նրա մի շարք գրքերը, ալբոմները, հոդվածները, ամբողջ մի շարք որմնանկարների ու մանրանկարների հիասքանչ ընդօրինակություններ՝ «Հին Հայաստանի գեղանկարչության համառոտ պատմություն» գիրքը, «Հայկական մանրանկարչություն» մեծադիր ալբոմը (որն ունեցավ մի քանի հրատարակություններ, այդ թվում՝ ֆրանսերեն, ռուսերեն), «Հայկական արվեստի ժողովածուում» որմնանկարչության մասին ընդարձակ գլուխը, «Հայկական դաճաձո գործվածքեղեն» ալբոմը և այլն։ Եվ երբ, այժմ, եզրափակում է զեկուցողը, Լ. Ա. Դուրնովոյի մահվանից տասը տարի անց մենք վերստին ընթերցում ենք նրա աշխատությունները, նրանք զարմացնում են իրենց արդիականությամբ և բնորոշումների դիպուկությամբ։

Լ. Ա. Դուրնովոյի աշխատանքներում հատուկ տեղ են գրավել գեղանկարչական լեզվի արտահայտչականության հարցերը, ինչպիսիք են նկարի հորինվածքը, տարածական կառուցվածքն ու ժամանակի ըմբռնումը, գույնն ու ռիթմիկան։ Նա կարողանում էր ի հայտ բերել դրանց օրինաչափությունների առանձնահատուկ կողմերը, նշել ընդհանրականն ու ազգայինը, որոնց բացահայտումը խիստ անհրաժեշտ է միջնադարյան արվեստի ուսումնասիրման համար։ Այս խնդիրներին էր նվիրված արվեստագետ Ն. Քոթանջյանի՝ «Հայ միջնադարյան արվեստի ուսումնասիրության մի քանի հարցերը և Լ. Ա. Դուրնովոյի գիտական ժառանգությունը» թեմայով զեկուցումը։

Նստաշրջանի մասնակիցների առջև զեկուցումներով հանդես եկան նաև Լենինգրադից հրավիրված գիտնականներ, արվեստագիտության դոկտոր Տ. Իզմայլովան և ճարտարապետության դոկտոր Ա. Յակոբսոնը։ Նրանցից առաջինի զեկուցումը նվիրված էր Կարինի 1181 թ. ձեռագրին, իսկ երկրորդինը՝ ջնարակած խեցեղենի հարցին։

Բանասիրական գիտությունների թեկնածու

Պ. Մուրադյանի զեկուցման թեման էր «Մաստարայի տաճարի թվագրության հարցի շուրջը»։ Տաթևի որմնանկարներին էր նվիրված արվեստագիտության թեկնածու Լ. Ազարյանի զեկուցումը, իսկ արվեստագիտության թեկնածու Ի. Դրամփյանի զեկուցման նյութն էին կազմում XVII—XVIII դարերի հայկական մի խումբ արծաթյա կազմերը։ Ճարտարապետության դոկտոր Ս. Մնացականյանը զեկուցեց Աղթամարի եկեղեցու որմնաքանդակների պատկերագրական համակարգի մասին, իսկ բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Մնացականյանի զեկուցումը վերնագրված էր՝ «Հայոց դիցաբանական եղջերուն հայ մանրանկարչության մեջ»։

Ունկնդիրները հետաքրքրությամբ լսեցին նաև Է. Կորխմազյանի («Մատենադարանի XIV դարի մի խումբ ձեռագրերը»), Հ. Հակոբյանի («Կիրակոս մանրանկարիչ») և Վ. Ղազարյանի («Սարդիս Պիծակի 1336 թ. ձեռագրի լուսանցազարդերը») զեկուցումները։

Լ. Ա. Դուրնովոյին նվիրված գիտական նստաշրջանի աշխատանքները ամփոփեց արվեստի ինստիտուտի դիրեկտոր Ռ. Զարյանը։

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ